

18381

Ելին Ա. Պրեդուսաց

Սեր կայ Տահ

2-րդ տակ.

Ե. 1894

891.99  
S-38

139

498 13/15

2034

наст

## БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА служит не одному, а многим

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

2

891.99  
un-38  
*uv*

# ՍԵՐԿԱՆ ՄԱՀ

# ԵՐԳԱԿԱՆԱՌԵՍՊՈՆՏ

## ՄԵԿ - ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

842A

A decorative horizontal flourish consisting of a central diamond-shaped knot flanked by symmetrical scrollwork.

ROD-ON-CHASSIS 1000 H.P. OHV LOCOMOTIVE

## ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷՐԻԿ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

1340



5

Печатана съ издания 1882 г. съ исправлениями.

## ЭРИВАНЬ

Типографія Эмина Теръ-Григорянцъ.

1894

10.

4217

# ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՍԵՐ Ժ Ա Մ Ա Ր Դ Ք

ԽՈՅԱԿՈՎԻ ԻՆՍ

Дозволено цензурою. Тифлисъ. 15-го Июля  
1894 года.

ԽՈՅԱԿՈՎԻ ԻՆՍ



1112

41

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Հայութիւնական պատճենահանդիսական  
ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Հ 0 0 3

4 0 8 1

ԱՅԻ ԱՅ ԱՅ

ՔԱՂՋԱԸ ԲԱՇԱԸ

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

**ՍԵՐ ԿԱՄ ՄԱՅ**

ՀԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

## ՍԵՐ ԿԱՄ ՄԱՀ

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԵՐԳԱԽԱԹՆ ՊԻԵՍ

ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱՑՈՎ.

ԹԱԳՈՒՀԻ ՅՈՎՈՍՔԵԱՆ. այրի, միջահասակ կին.  
ազատամիտ. թատերասէր:

ԱՐՏԻՒՐ ՅԱԿՈՎՅԵԱՆ. թեթևամիտ և շատ երևա-  
կայող. թատերասէր. 21 տարեկան։ Սո-  
ւա խօսակցութիւնն և ձեերը մինչեւ  
երկրորդ տեսիլք բեմական են. ամեն մի  
նախադ ասութիւնն արտասանելիս, կա-  
մենում է մի առանձին և գրաւիչ  
տպաւորութիւնն թողնել տիկնոջ վերայ։

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՅԵԱՆՅ, Արտիւրի հայրը. միջա-  
հասակ. աստիճանաւոր։

Անցու պատահած է Երևանում։

8426



Եսարանը ներկայացնում է  
Թագուհի Յովսէփեանի  
տան մէջ մի չամեստ սե-  
նեակ. խորքում և ձախ.  
գուռը. աջ լուսամուտներ։  
Անեակում կան աթոռներ, մի փոքրիկ  
բայց մասամբ խախուտ թախտ, գորգով  
ծածկւած, հայելի և մի թեթև դիւանի,  
որի առաջ գրւած է բոլորակ սեղան։

### ՏԵՍԻԼ Ա

Տ. ՅՈՎՈՍՔԵԱՆ ԵՒ ԱՐՏԻՒՐ

Մեր խաղերով զարմացրինք  
Ամբողջ քաղաքը։—

Զեռք բերեցինք մենք լիովին  
Մեր նողատակը։

Բեմին միայն մենք ենք տալիս  
Նշանակութիւն.  
Բեմը առանց մեզ —ոչինչ է,  
Չունի՛ գօրութիւն:  
Հանդիսականք թէև մեզի  
Զեն ծափահարում:  
Բայց պարզ է. մեզ ընդունում են  
Խւրեանց սրտերում:  
Մենք ենք տեղոյս բեմի զարդը,  
Մեզնով է խրոխտում,  
Մեր անունով, մեր խաղերով  
Է՛ նա պարծենում:  
ԱՐՏԻՒՐ

Եւ ո՞վ է այստեղ մեզանից լաւ խաղացողը,  
ասացէք տեսնեմ. մէ՛կին մատնացոյց արէք, որ  
մեզ հետ հաւասարւի. Հենց բեմ ենք դուրս  
գալիս թէչէ՛ կատարւում է այն, որ գրւածէ...  
ըըը... չգիտեմ որտեղ — Յերեկիլն արեգական՝  
կորնչին աստեղք։“

S. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ

Եւ շատ ուղիղ է: Ասացէք տեսնեմ պ. Ար-  
տիւր. այն խաղ էր, որ խաղաց „Արդիւնաւոր  
պաշտօնի մէջ“ տ. Վասակեանը՝ Ֆէլիսատա  
Գերասիմովնայի դերը, կամ օր. Հայկանուշը —  
Պոլինայի դերը և կամ օր. Գայիանէն-Խւլինկայի  
դերը. թէև շուտ շուտ ծափահարութիւն էին  
ստանում. — վչացրին, բոլորովին վչացրին:

ԱՐՏԻՒՐ

Ի հարկէ, ի հարկէ: Հենց վերցրու նոյն իսկ  
գեներալի դերը, այնպէս պէտքէ խաղացւէ՞ր...  
կամ Խւսովի դերը... միթէ կարելի էր այնպիսի  
խաղերով դուրս գալ բեմ: իսկ հանդիսականքը  
ծափահարում էին և այն, ինչպէս ձեզ յայտնի  
է, միայն նոցա խրախուսելու համար: Բայց,  
տեսնո՞ւմ էք, մեզ — բոլորովին. ինչո՞ւ, — որով-  
հետեւ մեր խաղերը ամեն ծափահարութիւննե-  
րից վեր են գասում:

S. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ

Բայց տեսա՞ք ես ինչպէս խաղացի տիկին-  
Վիշնեսկայի դերը... ո՞րպիսի լոռութիւն և  
ունկնդրութիւն էր թագաւորում հանդիսական-  
ների մէջ:

ԱՐՏԻՒՐ

Օօօ... ամենքն էլ հիացան. ես էլ հիացայ...  
և...և... հիացման կատարելապէս արժանի էիք:  
S. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ

Իսկ դուք, պ. Արտիւր, Ժադովի դեր կատա-  
րելու ժամանակ... սքան—չե—լի՛ էիք: Պէտքէ  
ասել որ դուք հասարակ հողեղէն չեք, այլ  
տաղանդ, գէնիյ... մի խօսքով կատարելութիւն:  
ԱՐՏԻՒՐ

Եթէ իմանայիք այդ դերը կատարելիս  
քանի քանի աչքեր լի ջերմ համակրութեամբ և  
սիրով ուղղւած էին վերաս... ես այդ նկատումէի  
բեմից, ինչպէս և Սիւլիվանը նկատեց լօժայի-

մէջ կելիին։ Հանդիսականների մէջ որքան օրինակ կային, բոլո՞րն էլ արտասուլքն աչքերին՝ նայում էին վերաս և նոցանից ամեն մէկը, երեկի, ինձ իւր իդէալն էր կարծում... բայց այդ միջոցին... իմ ուշքս գրաւուած էր մի ուրիշ էակով մի ուրիշ իդէալով... իմ միտքս զբաղւած էր նորանով և նա... ախ...

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ կեղծ

Բայց ո՞վ էր այդ երջանիկը, պ. Արտիւր ԱՐՏԻՒՐ

Ո՞վ էր... (հոգոց) Ապա վճռեցէք այդ հանելուկը։ Ես, երեակայենք թէ, ժադովն եմ, իսկ դուք՝ Պոլինան և, իրր թէ բեմի վերայ խաղում ենք. ապա հիմա դուք վճռեցէք այդ հանելուկը։

(Պանսնէն դնում է աչքերին, ձեռքերը խաչում է և նայում է նորա վերայ սիրահարած խելագար սասկեաի նման։ Նոյն արտայայտութիւնն երևում է և տիկին Յովսէփեանի երեսին; Սիջոց):

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ խորածոնէ Գլուխէն հայետցով  
Վճռել այդ հանելուկը... Դըմ—վա—րա—  
նում եմ...

ԱՐՏԻՒՐ ԿՐԵԼՆԵՐ ԱՐԵՎ

Վերջապէս, տիկին. Ես ձեզ եմ սիրում... դուք էք իմ իդէալս... խնդրում եմ ձեզնից փոխագարձ սէր։

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Ախ... ինչպէս կարելի է... ինչպէս կարելի է... պ. Արտիւր...

ԱՐՏԻՒՐ ԱՐՏԻՒՐ ԱՐՏԻՒՐ ԱՐՏԻՒՐ ԱՐՏԻՒՐ  
Եատ լաւ կարելի է, տիկին... Միթէ արժանի չեմ ձեր սիրոյն։

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Վեր կացէք... շուտ վեր կացէք խնդրեմ... այդ ինչ կը նշանակէ ձեր արածը... Ես... ախ...

ԱՐՏԻՒՐ

Ոչ, չեմ վեր կենալ... մինչեւ... չլսեմ ձեր համաձայնութիւնը։ Ես ձեզ սիրում եմ և խնդրում եմ ձեր ձեռքը։

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Եյո... Ես շատ ուրախ եմ... բայց...

ԱՐՏԻՒՐ ԷՇ ԸՆՉԵԼՈՎ

Ուրախ էք... դուք ուրախ էք... ուրեմն...  
Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Ախ, չէ, չէ... այդ լինելու բան չէ... լսեցէք ինձ...

ԱՐՏԻՒՐ

Ոչ, Ես ձեզ սիրում եմ... Ես ձեր համաձայնութիւնն եմ խնդրում։

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Ախ, Տէր իմ... Ես ևս ձեզ...

ԱՐՏԻՒՐ

Ուրեմն դուք ես ինձ սիրում էք։

Տ. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Ոչ, ոչ... այդ անկարելի բան է։

ԱՐՏԻՒՐ ԷՇ ԸՆՉԵԼՈՎ

Տիկին, տուեցէք ինձ... հասկանում էք...

ես ձեզ մինև այսուեղ (ցոյց տալով կոհորդը) սիրում  
եմ... և եթէ չէք կամենալ մահս՝ մի մերժէք  
ինձ ձեր ձեռքը:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Արտիւր ջան, Արտիւր ջան... վեր կացէք և  
մանրամասնօրէն խօսենք մեր սիրոյ... այսինքն  
այդ հարցի մասին:

ԱՐՏԻՒՐ

Խօսենք, այո, խօսենք... բայց ես չոքած, իսկ  
դուք նստած... որովհետեւ եթէ ես չլսեմ ձեր  
համաձայնութիւնը, կանգնել չեմ կարող...  
ծնկներս չեն ենթարկուիլ իմ իրաւանց:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Եթէ այդպէս է... ես էլ քեզ եմ սիրում,  
Արտիւր և տալիս եմ քեզ իմ ձեռքս և սիրտս...  
(Պալէն է) Ախ... այս ինչ արեցի ես...

ԱՐՏԻՒՐ իսկոյն բուելով յեւ+ը և մի ժանի անդամ  
համբուրելով, վէր է նույն-

Սիրում, ես... տալիս ես ինձ այս ձեռքը...

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Բայց, Արտիւր, գիտե՞ս դորա հետեւանքը:

ԱՐՏԻՒՐ

Ես ոչինչ չգիտեմ և իմանալու ցանկութիւն  
չունեմ: ուրեմն թոյլ տուր ինձ առաջարկել  
մատանիս և ստանալ քեզանից փոխարէնը...  
որ լինի մեր ամուսնութեան նշանը:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Բայց ես... քեզանից մեծ...

ԱՐՏԻՒՐ

Ես ոչինչ բայցեր չեմ կամենում լսել:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Եթէ այդպէս է առ և իմս. բայց լաւ հաս-  
կացիր քո արածի նշանակութիւնը: (Պալէն է  
նապանին):

ԱՐՏԻՒՐ ինը իւլուստրանում է և լուս լուս համբուրել  
Շնորհակալ եմ... շնորհակալ եմ... շնորհա-  
կալ եմ... (Շնում է նապանին նապը և համբուրել է  
Տիկնող յեւ+ը) Ուրեմն... համբոյր, համբոյր  
շնորհաւորութեան:

(Համբուր և գեւ-ան+):

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Քո ժպտագէմ հայեացքներով  
ինձ մեծ յոյսեր տուեցիր.

Արտիս մէրը քիչ վառօդով  
Բորբոքեցիր, վառեցիր:

Քո սիրավառ ձեւերովդ

Արտիս մէջ սիւն դրեցիր.

Քաղցրաշշունջ բառերովդ

ինձ շունչ տուիր, գերեցիր:

ինձ յանձնեցիր սիրտդ, հոգիդ...

Այդ արեցիր ակներեւ.

Օ՛... քեզ համար չեմ խնայիլ  
Ոչ կեանք, ոչ լոյս, ոչ արեւ:

Ահա և իմ զգացմունքս դէպի քեզ, Արտիւր  
ջան... հիմա հասար քո նպատակիդ կատարե-

լապէս... Բայց ասա տեսնեմ, քո հօր պատասխանը ինչպէս պիտի տառ. որոյ համար, կարծես, կասկած ընկաւ սիրում

Ա. Ա. Տ. Ի. Ի. Ի.

Ինչ պատաժիսան. կասեմ... սիրեցի և նշան-  
ւեցի Ել ի՞նչ կայ:

Տ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

Իսկ դու նորանից չե՞ս վախենում:

Ա. Ա. Տ. Ի. Ի. Ի.

Ո՞վ, ե՞ս... գիտէք... բայց չէ. ինչո՞ւ պիտի  
վախենամ:

Տ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

Իսկ եթէ չամաձայնեց:

Ա. Ա. Տ. Ի. Ի. Ի.

Վա՛: Այդպիսի բանին Ել չեն համաձայնի՞ւ:  
Վերջապէս ես պսակւում եմ ինձ համար, ոչ  
թէ հօրս:

Տ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

Իսկ եթէ արգելեց:

Ա. Ա. Տ. Ի. Ի. Ի.

Ինչպէս կամենում է—արգելի. ՞վ է լսողը:  
Նատ հեշտ եմ ձեռք բերել քեզ:

Տ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

Բայց նա կարող է ամեն կերպ խոշնդոտ լի-  
նել քեզ:

Ա. Ա. Տ. Ի. Ի. Ի.

Նա... այս... բայց սիրոյ գէմ ի՞նչ խոշնդոտ:  
Չե՞ս յիշում ՞Աէր և նախապաշարմունքի՝ մէջ՝

թէ ինչպէս Լելին պսակւում է Սիւլեվանի հետ,  
չնայելով, որ նորա հայր Լորդը ինչպէս էր ար-  
գելում և ինչ հնարքներ էր գործ դնում նորա  
դէմ: Չե՞ս յիշում Մեհրիմէին՝ թէ նա ինչպէս  
ճակատ առ ճակատ կանգնեց իւր հօր դէմ և  
պահանջեց իւր սիրահարին և վերջապէս՝ ինչ  
ինչ անելուց յետոյ՝ խմեց թոյն, մահացաւ: Քա-  
նի՞ քանի՞ այդպիսի օրինակների ենք պատահել  
մենք թատրոնի բեմում: Չմոռանաս նաև որ  
նորանք աղջիկներ էին, իսկ ես—տղամարդ:  
Հայրն ինչ է իմ պէս մէկի առաջ. վերջապէս  
ի՞նչ յիմար նախապաշարմունք պիտի լինի հօրս  
կողմից...

Տ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

Իսկ եթէ արգելեց. չմոռանաս որ մենք ա-  
մեն բան արդէն վերջացրել ենք: Այն ժամա-  
նակ ի՞նչ պիտի անես...

Ա. Ա. Տ. Ի. Ի. Ի.

Այն ժամանակ...՝ Աէր կամ մահ:

Տ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

Նատ լաւ. դորա համար ես կրկին տալիս եմ  
քեզ իմ ձեռքը և համբուրում եմ քեզ: Իսկ  
եթէ պարտազանց գտնուեցիր, այն ժամանակ  
չմոռանաս, որ ես Օտելլօյի գերը կխաղամ:  
Ցիշում ես Օտելլօյի այն խօսքը, երբ մօտեցած  
իւր սիրելի կնոջ մահճին՝ նորա քնած ժամա-  
նակ, ասաց. Դեղզէմօնա, Դեղզէմօնա...  
յառաջ քան սրով հարւածելս քեզ, համբուրում

եմքեզ...

ԱՐՏԻՒՐ

Այո, այո, յիշում եմ:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Անպէս և ես կարւածեմ քեզ: Բայց չմոռանաս նաև՝ որ կանացի վրէժը շատ անողորմ կլինի:

ԱՐՏԻՒՐ

Բայց յէ՞ որ առաջ քան հարւածելդ, պիտի համբուրես ինձ:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Այո և անպատճառ:

ԱՐՏԻՒՐ

Օօօօ... այն ժամանակ, ստանալով համբոյրդ, նշանակութիւն չի ունենալ հարւածդ ինձ համար:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Լաւ տեսնենք:

ԱՐՏԻՒՐ

Այո, այո, կտեսնես: Օ՞... և դու կտեսնես թէ ես ինչպէս կպաշտպանեմ քեզ հօրս առաջ:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Այսինքն ինձ չպիտի պաշտպանես դու, այլ քեզ. որովհետեւ, ես կարող եմ ինձ պաշտպանել: Իսկ դու, սիրելիս, զգուշացիր քեզանից, որովհետեւ ես ինչպէս նկատել եմ, վախենում ես քո հօրից և վախենում ես շատ:

ԱՐՏԻՒՐ

Ո՞վ, ե՞ս... ե՞ս եմ վախենում... Դու գիտե՞ս

որ ոչ թէ միայն ես, այլ ուրիշներն էլ չեն վախենում հօրիցս... Իմ չորս տարեկան եղայրս էլ մինչև անգամ չի վախենում նորանից... Դու ինչիցն ես ախր այդպէս գաղափար կազմել իմ վերայ:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Քո շարժմունքներից:

ԱՐՏԻՒՐ

Չէ, հոգիս. դու դեռ ինձ չես ճանաչում:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Լաւ, լաւ, կտեսնենք:

ԱՐՏԻՒՐ

Այո, այո, կտեսնենք:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Իսկ եթէ հայրդ քեզ զրկեց ժառանգութիւնից...

Այն ժամանակ...

ԱՐՏԻՒՐ

Այն ժամանակ... Բայց յէ... ինչպէս կարող է լինել:

Տ. ՅՈՎՈՒԵՓԵԱՆ

Իսկ եթէ եղաւ:

ԱՐՏԻՒՐ

Այն ժամանակ... (ԴՀԵԴ):

Այն ժամանակ ես կհանեմ Եւրոպական շորերս:

Այն ժամանակ վայր կդնեմ Իմ թանգագին գլխարկս:

Իմ թանգագին գլխարկս:

Այս կդնեմ նաև քթիս չել չո զո  
Սյս ոսկեպատ պանսընէս ։ Կառնամ  
Կշպրտեմ եւ շատ հեռու ։ Համայն  
Ափրուն վայտս իմ ձեռքէս։  
Այն ժամանակ ցնցոտիներ ։ Այս կա  
Ուրախ սրտով կհագնեմ  
Նւ օրական մշակութեամբ  
Քեզ սիրելիս կպահեմ։

S. ՅՈՎՈՒՔՓԵԱՆ

Համար ։ Ուրեմն եթէ այդպէս է, Արտիւր ջան,  
գու երբէք այդ օրը չես տեսնիլ, Իմ կարողու-  
թիւնո շատ և շատ բաւական է մեզ ապրե-  
ցնելու համար. իսկ ինչ էլ կաշխատես, այն  
գործ կդնես քո արտաքին վայելցութեանց հա-  
մար, Նորեր կունենաս ամենաթանգարին կտոր-  
ներից. գլխարկիդ տեղ՝ կդնես ցիլինդր. մի  
պանսընէի տեղ՝ կգնես տասն և մէկը. մինչեւ  
անգամ ձեռքիդ վայտն էլ արծաթից ձուլել  
կտաս և այդպիսով կհանես քո թշնամիների  
աչքերը։

ԱՐՏԻՒՐ արհանձարհանօ

Թշնամիներ... ինչ թշնամիներ... Բոլորին էլ  
կջարդեմ կիշրեմ, լեզուներն արմատից կկտրեմ,  
քթները կկտարատեմ, իրարավ կտամ և քեզ  
համար յաղթական անուն կժառանգեմ, որով  
կպսակեմ ինձ և այն պսակը կրերեմ և կդցեմ  
ոտերիդ տակը... ։

S. ՅՈՎՈՒՔՓԵԱՆ

Երջանի՛ կ բռպէ։

ԱՐՏԻՒՐ

Օ՛... և որպիսի Երջանի՛ կ... Այդ մանր մունր  
ինտրեգանտների մասին խօսելն աւելորդ է.  
Հարկաւոր է միայն վչեղ՝ և ամենքն էլ ալիւրի  
նման կթռչեն օդը և կանչետանան նորա ան-  
վերջ մթնոլորդի մէջ։

S. ՅՈՎՈՒՔՓԵԱՆ

Հենց դորա համար մի համբոյր ևս... (համ-  
բոյր) Ես կարծում եմ, որ այդպէս. Էլ կլինես։

ԱՐՏԻՒՐ

Հըմ... Թող հարկաւոր ժամանակը գայ։

S. ՅՈՎՈՒՔՓԵԱՆ

Իսկ... Արտիւր ջան... Եթէ յանկարծ նոյն  
իսկ այս բոպէիս հայրդ ներս մտնէր, ի՞նչ կա-  
նէիր. Հըմ... ։

ԱՐՏԻՒՐ

Հըմ... հայրս... Է՛. թող ի սէրն Աստուծոյ  
հօրս իւր տեղը... Ի՞նչ պիտի անէի... Նոյնը  
կանէի, ինչ որ միւսներին... Բայց չէ... ։

Նախ կինդրեմ, նախ կ'աղաչեմ

Թոյլ տայ ինձի, չարգելի.

Իմ վեհ, աղնիւ զգացմունքիս  
Նա խոշնդոտ չլինի։

Իսկ երբ որ նա հակառակեց,

Խօսքս անգամ չլսեց



Եւ աղաշանք — պաղատանքս

Նորա գութը չշարժեց.

Այն ժամանակ ես նորանից

Չունեմ երկիւղ, չունեմ աշ.

Հաստատապէս կառաջարկեմ

Որ ընտրի ինձ՝ սէր կամ մահ:

Իսկ եթէ այդ էլ չներգործեց... այն ժամանակ... օ... դու դեռ չգիտես ինձ... ոտսկարեմ նորա տանից... Միտյն... ի հարկէ, այնքան քարի կլինես, որ ինձ կպաշտպանես և չես թողնիլ փողոցում: ապա թէ ոչ՝ հաւատա՞ր՝ իմ դրութիւնս շատ դժւար կլինի:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Միամիտ կաց, միամիտ

Չես մնալ դու փողոցում.

Պաշտպանութիւն կգտնես

Իմ այս փոքրիկ խրճիթում:

Քեզի համար դռներս

Կրնկի վրայ միշտ բաց են.

Քեզ ընդունել, պաշտպանել

Ամեն բոպէ պատրաստ են:

Դու կգտնես այս տան մէջ

Ժպիտ, ծիծաղ, քաղցրութիւն...

Սիրոյ ժամեր... բոպէներ...

Մեզ կաւետեն միութիւն:

Անձս, սիրոս և հոգիս

Ես պատրաստ եմ քեզ զոհել,

Երբ իմանամ, որ իմն ես

Եւ դու իմն ես ան արգել:

ԱՐՏԻՒՐ ԳՐԻԵՎԸ

Եւ միթէ կասկած կարող է լինել: Ես քոննեմ և դու իմն ես...

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Բայց գիտե՞ս... այսօր երեք անգամ ձեր ծառային հայրդ ուղարկել է քո ետևից:

ԱՐՏԻՒՐ ԵՐԵՒՆ ՀՊԱՅ

Իմ ետևից,

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Երեք անգամ:

ԱՐՏԻՒՐ

Իսկ դու ի՞նչ ասացիր նորան:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ

Ասացի որ այսուեղ չես և ամեն անգամ էլ այսպէս ճանապարհ դրեցի

ԱՐՏԻՒՐ

Յետոյ յետոյ...

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ ՀՊԱՅ

Կարծես թէ սիրոս վկայում է, որ այս անգամ հայրդ ինքը կգայ:

ԱՐՏԻՒՐ

Ինչո՞ւ... Ինչո՞ւ ես այդպէս կարծում: Ասումես երեք անգամ էր ուղարկել ծառային:

S. ՅՈՎՈՒՔԵԱՆ ԽՊԵԼ անդհառ Աբրիւշէ վերայ

Հը... ինչո՞ւ շփոթւեցիր: Դեռ հայրդ որ չեկել՝ այդպէս վախեցար, շփոթւեցիր, իսկ եթէ...

ԱՐՏԻՒՐ ի-յէտօն լիովիլը

Ի՞նչպէս թէ „վախեցար“... ով „շփոթւեց“:

S. ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ

Չէ, Արտիւր. ես քեզանից կասկածում եմ:

ԱՐՏԻՒՐ շիռնոնիր լողելը

Ի՞նչպէս թէ կասկածում ես... ինչո՞ւ համար...  
Ե՞ս եմ շփոթում... Ե՞ս եմ վախենում... Ո՞յ.  
Ես այրում եմ անհամբերութիւնից, սպասելով  
այդ բովէին... Ախ, երանի թէ հենց հիմա  
գար, որ միանգամայն համոզուէիր թէ ես ինչ  
եմ... Ես, որ տեղն ընկնի, գիտե՞ս ինչ կանեմ...  
(Պ. Յովեկեանը լուսանոտից նայում է) ձեռաց  
կթեպրեմ; ճշմարիտ կթեպրեմ... կաշուահան  
կանեմ... Նա կարողանայ իմ դէմ այսպիսի բա-  
նում հակառակե՞լ...

Չեմ լսիլ և մի խօսք

Կասեմ որ սիրել եմ:

Եւ սիրոյս մատանին

Ես արդէն տուել եմ:

Կիսդրեմ մեզ օրհնի,

Որպէս հօր՝ կաղաչեմ:

Հակառակ դէպբերում

Ճանաչել ուզիլ չեմ:

Իսկ եթէ յարացաւ,

Ես դնջին կիսբեմ

Եւ իսկոյն ճանապարհ

Առաջը կդնեմ:

ՏԵՄՆԵՆՔ ի՞նչ պիտ' անի

Այդ դէպբում նա իմ դէմ

Երբ սիրով զինորւած

Կկանգնեմ դէմ առ դէմ:

S. ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ

Արտիւր, ասացի, որ սիրաս վկայում է հայ-  
ըլլու ուղիղ որ գալիս է. տես! Երևի այստեղ է  
գալիս: Հիմա քեզ տեսնենք:

ԱՐՏԻՒՐ

Հայրս... ուղիղ... (Հիռնուած նայում է լուսա-  
մարէց) Այ, այ, այ... Թագուհի ջան, ուղիղ որ  
գալիս է. բարկացած է երեւում: (Նայում է այս  
և այն հողմ, կտժնալով ծածկէել) Սպասիր... լաւ  
կլինի որ ես գնամ: (Վերցնում է արտէ գլխարէլ):

S. ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ

Ո՞ւր, ո՞ւր ես կամենում գնալ:

ԱՐՏԻՒՐ

Ըըը... ոչինչ: Կամենում եմ հեռանալ: Թող  
նա ինձ այստեղ չտեսնի. առ այժմ... յետոյ...  
մի ուրիշ ժամանակ...

S. ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ

Հա՞... Ո՞ւր մնացին քո մեծախօսութիւնները:  
Այդպէս պիտի թեպրէիր: Լաւ շուտ վախեցար...

ԱՐՏԻՒՐ

Չէ, հոգեակ ջան. ինչո՞ւ եմ վախենում...  
այսինքն... մի փոքր սիրաս է գոզում: Թէ չէ  
ինչո՞ւ պիտի վախենամ. չէ՞ որ հայր է...

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ ԱԵՐԼԱ արհամաշնոնդով

Հա՞ չես վախենում, միայն սիրադ է գողում  
Հա՞... Ես չեմ թողնիլ, որ ոտք տանից դուրս  
դնես:

ԱՐՏԻՒՐ

Այդ ի՞նչ կապրիզ է, հոգիս... վերջապէս  
կարող է մեր մէջ թուր ու թւանք եռալ...  
(Դուք ծեծում են. կոմետալը ծածկել արինով  
ննջարանում): Բըր... Գոնէ միւս սենեակում...

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ արտկ հոփակը ննջարանի դուռը

Ո՛չ, ոչ. անկարելի է:

ԱՐՏԻՒՐ

Բայց...

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Բայց այստեղ պիտի մնաս:

(Դուք ի՞նչն ծեծում են):

ԱՐՏԻՒՐ

Այ, այ...

(Ցիկնը գնում է դուռը բանալու: Արտիւրը թոքը կպած այս  
և այն կողմ է ընկնում և, վերջապէս, մտնում է թախտի տակ):

ՏԵՄԱԼ Բ

Նոյն և ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ,

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ

Բարե ձեզ, տիկին:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Այս, բարե ձեզ. շատ ուրախ եմ տեսնել  
ձեզ իմ տանս: Համեցէք, համեցէք: Ես ձեզ  
հետ շատ կարևոր գործ էլ ունեմ:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ

Ներողութիւն, տիկին. նստելու միջոց չունեմ:  
Ես շտապում եմ: Ասացէք խնդրեմ: ձեզ մօտ է  
մեր փուչ Յարութիւնը:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Պարոն Արտիւրը... (Հայուած, Ավանալը ԱԵ  
Ի՞ւ եղաւ Արտիւրը): Ոչ ինձ մօտ չէ այժմ:  
ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ

Իսկ այսօր՝ ամբողջ օրը:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Այսօր... այս... այսօր ինձ մօտ էր:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ

Ի՞նչ էր շինում նա ձեզ մօտ:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Ոչինչ. ինձ սովորեցնում էր գերս. որ բա-  
ւական գժւար է. ցոյց էր տալիս ձեւերը:—  
Ներկայացնումը շատ շուտ է նշանակւած:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ առանցին

Ոչ... կարծեմ... (Նորան) Բայց ինչու չեկաւ,  
երբ երեք անգամ ուղարկեցի նորա ետևից  
ծառային:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Ասեմ ինչու: Յուսով եմ որ մեծ ուրախու-  
թեամբ կնդունէք այն լուրը, որ ես ձեզ հիմա  
պիտի հաղորդեմ:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՎՔԵԱՆ (առանցին)

Մի գուց է...

S. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Զեր որդին կամենում է նշանւել.  
Գրիգոր ՅԱԿՈՎԲԵԱՆ  
Նշանուել... ում վերայ:  
ԱՐՏԻԿԻՐ Ռախով էրևալով աւանցին  
Այ, այ... ինչ շուտ սկսեց:  
Գրիգոր ՅԱԿՈՎԲԵԱՆ  
Բայց նա դեռ փոքր է և առանց իմ համա-  
ձայնութեան նա չի կարող այդ անել:

S. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Հենց գորա համար էլ (+աշըզլ Յակովիլը նիւուլ  
և համբուրելով) խնդրում եմ իմ և նորա կողմից  
Ճեր համաձայնութիւնը և օրհնութիւնը:  
Գրիգոր ՅԱԿՈՎԲԵԱՆ

Ի՞նչպէս թէ... դուք... հասկանում էք Ճեր  
արածը... Վերջապէս նորան գրաւեցիք:

S. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Ոչ, նա ինձ գրաւեց, նա հանեց ինձ իմ խա-  
ղաղ գրութիւնից:

Գրիգոր ՅԱԿՈՎԲԵԱՆ

Բայց դուք ի՞նչպէս եք համաձայնում... նա  
Ճեր որդու տեղն է...:

S. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Այդ նորա բանն է: Սիրոյ առաջ ոչինչ չէ  
կարող դէմ կենալ. սէրը զօրեղ է:

Գրիգոր ՅԱԿՈՎԲԵԱՆ

Սէրը որն է. ի՞նչ սէր ի՞նչ բան և այնպիսի  
մի թեթեամիտ երեխայի համար, որ դեռ գլու-  
խը պահել չգիտէ:

S. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Բայց ինձ ընդունելի է:  
Գր. ՅԱԿՈՎԲԵԱՆ  
Իսկ ինձ ընդունելի չէ և երբէք չեմ կարող  
ընդունել:

S. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Դուք ի՞նչ կարող եք անել, երբ նա արգէն  
ընդունել է և տուել է ինձ այս մատանին:  
Գր. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Մատանին... Օ՛հ, այլ ևս չեմ կարողանում  
սանձել ինձ. ոտներս թուլանում են:

(Ընկնում է թախտի վերայ. որի մի մասը կոտրում է. Արտիրը  
շատ վատ սեղմելով տակին գոռում է):

ԱՐՏԻԿԻՐ

Այ, այ, այ...

Գր. ՅԱԿՈՎԲԵԱՆ Երէն-վէց և զարմանից վեր նույնը  
Այս ինչ կնշանակէ... (Թախով առէնից, Արտիրէն  
ականը բաւած դուրս է հանում) Ուրեմն այդպէս...  
(Պէտքը նորա ունի պահանջնեն) Խալխի թախտի  
տակ, բայց էլի պահանէդ աչքերիդ... Դորանով  
ես այսպիսի կանանց խելքը գրաւում: Նշան  
գնումն մատանի տալիս... Ես վերջ կտամ այս,  
վերջ կտամ քո այդ ցնորամիտ և թեթևամիտ  
վարմունքներիդ. շուտով... Այնպէս խաղ խա-  
ղամ քո գլուխը, որ մինչեւ անգամ երազած  
չլինես. սպասիր... Իսկ մինչեւ այդ՝ գուրս կո-  
րիր, որ քո շուտաքն այստեղ չերևայ:

ԱՐՏԻԿԻՐ

Ըստ...

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ.

Ինչպէս թէ դուրս... ինչ իրաւունքով...  
Մոռանմաւմ էք, որ այս իմ տունս է:

ԳՅ. ՅԱԿՈՎ.ԲԵԱՆ

Բայց սա իմ որդիս է:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Իսկ իմ նշանածս է:

ԳՅ. ՅԱԿՈՎ.ԲԵԱՆ լոյնա-ով

Նշանածդ է... և դուք յանդգնում էք այդ-  
պէս ասել... Դուք այդպիսով արաժաւորում էք  
կանացի անունը:

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Ես ինչ անեմ, երբ Արտիւրդ

Ինձ գրաւեց, ինձ գերեց

Եւ մատանին զօրով, ոյժով.

Որպէս նշան ինձ տւեց:

Այժմ ուշ է, պէտքէ ասել.

Հակառակիլ կարող չէք:

Թէ ակամայ և թէ կամաւ

Պիտի նշանն այս օրհնէք:

(Արտիւրին)

Աւրեմն, Արտիւր, մեր հօր առաջ

Որպէս որդիք եկ չոքենք.

Եւ նորանից ոէր, օրհնութիւն

Խոնդրենք, մաղթենք, աղաշենք:

(Արտիւրը շփոթուած է)

ԳՅ. ՅԱԿՈՎ.ԲԵԱՆ, բարիտոն

Ի՞նչ օրհնութիւն և կամ ի՞նչ սէր

Սպասում էք ինձանից

Պիտի ցանկալ ձեզ սև օր, մահ...

—Այս է բզիսում իմ սրտից:

(Արտիւրին)

Դուրս կորիր շուտ այստեղից դու,

Այս թովուհուց հեռացիր.

Ապա թէ ոչ ես կթափեմ

Գլխիդ շանթեր. —իմացիր:

(Արտիւրը վերցնելով գիտարկը կամենում է փափչել հօր չարա-  
դէմ հաեցքից. բայց առ Յովեկեանը կանգնեցնում է):

Ուր ես փախչում, Արտիւր: Դու ինձ խա-  
բեցիր, սէրս առար... Յիշիր որ Օտելօյի դերը  
կխաղամ ես քո գլուխը, փախկոտ նապաստակ:

ԱՐՏԻՒՐ

Դէ ես ինչ անեմ... հայրս...

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ

Բռնիր ձեռքս և չոքած խնդրենք մեզ խղճայ.  
Հակառակ գէպքում—սէր կամ մահ:

ԱՐՏԻՒՐ վարահայոց

Տուր ձեռքդ: (Բանում է աինով յեւուը և ըստում  
Բն հօր առաջ):

ՄԻԱՍԻՆ

Վերջին անգամ խնդրում ենք համաձայնու-  
թիւն և օրհնութիւն:

ԳՅ. ՅԱԿՈՎ.ԲԵԱՆ

Տօ գեւրս, ես քեզ ասում եմ:

(Նոքա վեր են կենթմ):

Տ. ՅՈՎՈԵՓԵԱՆ, Արտիւրին, կախոց

Սէր կամ մահ:

Հայոց Առ Գիրք 5  
և Մատուցուածաւ

18381

— 28 —

ԱՐՏԻՒՐ, Աւելի սիրու առած, պանսնէն կրկին դնում է աչքերին  
և, շատ վաեմ և գոռող դիրք բռնելով, աջ ձեռքը  
երկար պահելով, կամենում է վախճանել հօրը և ցոյց  
տալ նորան իւր վերջին որոշումը:

Սէր կամ մահ:

(Տիկ. Յովոեփեանը ուրախ դիրք է ընդունում, իսկ Յակովեանը,  
այս յանդզնոթիւնը տեսնելով, մոլորում է):

ԱՐՏԻՒՐ

Որոշեցէք այս երկուսից մէկը:

Գ.Ռ. ՅՈՎՈՎ.ԲԵԱՆԸ ապահովություն

Այս քեզ սէր, այս էլ քեզ մահ... Ահա իմ  
որոշմունքս: Դուրս...

(Արտիւրը շփոթւած և յափշտակած հօր երկիրով, որը աւելի  
սաստկանում է ապահովերից, մոռանում է ամեն բան և հազիւ  
իրեան դուրս է ձգում: Գնում է հայրը):

Տ. ՅՈՎ.ՍԵՓԵԱՆ, Հոպուտժ, Արդիւրի Եպիսկոպոս

Արտիւր... Արտիւր...



ՊԵՐ

2013

